

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍԻ

Ք.Երևան
Ժ.11.00

18 մարտի 2010թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 47 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տարոն Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ.Մելքումյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Գ. Բաղդասարյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տարոն Մարգարյանը հրապարակեց Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Նատալյա Լափաուրիի դիմումը՝ Երևանի ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին:
5. «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշիռ գույք ընդգրկելու մասին:
6. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի NN9-Ա և 10-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:
7. Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի հ. 983-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:
8. ՀՀ ժողովրդական արտիստ Արտեմ Մեջինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
9. Ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
10. ՀՀ ժողովրդական նկարչուհի Մարիամ Ասլամազյանի և ՀՀ վաստակավոր նկարչուհի Երանուհի Ասլամազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
11. ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ վաստակավոր շինարար Գևորգ Թամանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
12. Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Հենրիկ Իգիթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
13. ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ռոմեո Ջուլիակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Օրակարգի հաստատման մասին:
ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի 18.03.2010թ. նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, Երևանի ավագանու ֆինանսավարկային, տնտեսական, առևտրի և ծառայությունների, տրանսպորտի, ճանապարհաշինության հետ կապված հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հհ.1-5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, Երևանի ավագանու ֆինանսավարկային, տնտեսական, առևտրի և ծառայությունների, տրանսպորտի, ճանապարհաշինության հետ կապված հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը, Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության նախագահ Ա. Վարդանյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ա որոշմամբ հաստատված.

- 1) ծախսերի գումարն ավելացնել 1,515,220.8 հազ. դրամով,
- 2) դեֆիցիտի (պակասորդի) գումարն ավելացնել 1,515,220.8 հազ. դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների /հավելվածները կցվում են/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել.

1) Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպություններում շահութաբաժինների վճարման գործընթացի կազմակերպման կարգը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման և պարտավորությունների գանձման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Սահմանել, որ Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններում՝

1) բաժնետերերի ընդհանուր ժողովների (Երևան քաղաքի ավագանի) քվեարկությանն ու հաստատմանն է դրվում Երևան համայնքի մասնակցության դիմաց տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթի 20 տոկոսից ոչ պակաս գումար, որպես տարեկան շահութաբաժին, Երևանի բյուջե վճարելու հարցը:

2) տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով ստացված մինչև երեք միլիոն դրամ զուտ շահույթից Երևանի բյուջե շահութաբաժին վճարելու հարցը բաժնետերերի ընդհանուր ժողովներում (Երևան քաղաքի ավագանի) քվեարկության և հաստատման չի դրվում (շահութաբաժին չի վճարում):

3) այն դեպքում, երբ զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով, ապա Երևանի բյուջե շահութաբաժին վճարելու հարցը բաժնետերերի ընդհանուր ժողովներում (Երևան քաղաքի ավագանի) քվեարկության և հաստատման չի դրվում (շահութաբաժին չի վճարում):

3. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններում, սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով կարող են բաժնետերերի ընդհանուր ժողովների (Երևան քաղաքի ավագանի) քվեարկությանն ու հաստատմանը դրվել Երևան համայնքի մասնակցության դիմաց ստացված զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի 20 տոկոսից պակաս չափեր:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների առաջարկություններով և աշխատակազմի ֆինանսական ու եկամուտների հաշվառման և գանձման վարչությունների համաձայնությամբ՝ նախորդ տարվա համայնքային գնումների ֆինանսավորման գծով բյուջետային պարտավորությունները կարող են հաշվանցվել այդ տարվա վճարման ենթակա շահութաբաժինների սահմաններում՝ բանկային (գանձապետական) հաշիվների միջոցով, «Վճարում-գանձում» եղանակով:

5. Սույն որոշման դրույթները կիրառվում են Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների 2009 թվականի և հետագա տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից շահութաբաժինների համայնքի բաժնեմասի վճարման գործընթացի նկատմամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47

դեմ - 0

ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ - «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշիռ գույք ընդգրկելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1. Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին, Երևանի քաղաքապետարանի 2009 թվականի ծրագրերով կառուցված Երևան քաղաքի վարչական շրջանների փողոցների ու բակերի.

1) ոռոգման ցանցերը՝ 253274.0 հազար դրամ արժեքով /այսուհետ՝ Գույք/ ընդգրկել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշիռ /հավելված 1/:

2) Արտաքին լուսավորության ցանցերը՝ 266200.0 հազար դրամ արժեքով /այսուհետ՝ Գույք/ ընդգրկել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշիռ /հավելված 2/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի NN9-Ա և 10-Ա որոշումներն ուժն կորցրած ճանաչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքում հողի հարկի, գույքահարկի, հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի վարձավճարների /այդ թվում՝ տույժերի և տուգանքների/ օրենքներով, այլ իրավական ակտերով և համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ», «զ», «թ», «ժ», «ծ» կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ կետով, 40-րդ հոդվածի 3-րդ, 7-րդ, 7-րդ կետերով, 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված տեղական տուրքերը գանձելու և թույլտվությունները տալու լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մասին» N9-Ա և «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N10-Ա որոշումները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ - Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի հ.983-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑ - Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ, Երևանի ավագանու ֆինանսավարկային, տնտեսական, առևտրի և ծառայությունների,

տրանսպորտի, ճանապարհաշինության հետ կապված հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Պ. Փլավյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի «Մի շարք առևտրային կազմակերպությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները, դրանց կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.983-Ա որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ - ՀՀ ժողովրդական արտիստ Արտեմ Մեջինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության անդամ, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Մարտին Վարդազարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստ Արտեմ Մեջինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հր. Քոչարի 19 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ - Ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության անդամ, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Աննա Ասատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հալաբյան 11 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ - ՀՀ ժողովրդական նկարչուհի Մարիամ Ասլամազյանի և ՀՀ վաստակավոր նկարչուհի Երանուհի Ասլամազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության անդամ, քաղաքաշինություն, հողօգտագործում և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հ. Պողոսյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀՀ Ժողովրդական նկարչուհի Մարիամ Ասլամազյանի և ՀՀ վաստակավոր նկարչուհի Երանուհի Ասլամազյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Աբովյան 24 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 47
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ - ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ վաստակավոր շինարար Գևորգ Թամանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության անդամ, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Աննա Ասատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ վաստակավոր շինարար Գևորգ Թամանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան 44 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 47
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

12. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Հենրիկ Իգիթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության անդամ, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Արա Երնջակյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հենրիկ Իգիթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ե. Կողբացու 42 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 47
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

13. ԼՍԵՑԻՆ - ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ռոմեո Ջուլիակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության անդամ, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահ-

հույժան, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Աննա Ասատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ռոմեո Ջուլիակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կորյունի 7 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 47
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տ. Մարգարյանը Երևանի ավագանու անդամներին առաջարկեց Երևանի ավագանու հաջորդ նիստը գումարել 2010 թվականի ապրիլի 12-ին ժամը 11:00-ին: Նիստի ընթացքում քաղաքապետի տեղակալները և քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կմասնակցեն նիստին և կպատասխանեն Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ